
ԿԵՂԾԱՆՈՒՆ, ԾԱԾԿԱՆՈՒՆ, ՄԱԿԱՆՈՒՆ
ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ *

ՓԱՌԱՆՁԵՄ ՄԵՅԹԻԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ հատկանվանագիտություն, անձնանվանագիտություն, անձնանուն, կեղծանուն, ծածկանուն, մականուն, Հր. Աճառյան, Բ. Հովակիմյան, Էդ. Աղայան, Հ. Պետրոսյան, Բառարան, Բառարանագրություն, անուն-մականուն, անուն-կեղծանուն, գրական անուն:

Նախաբան

Անձնանվանական համակարգի (անուն, ազգանուն, տոհմանուն, հայրանուն, մականուն, կեղծանուն) քննությունն արդի լեզվաբանության կարևոր ու առանցքային հարցերից է: Մարդիկ անվանակոչվել են բոլոր ժամանակներում, բայց ինչպե՞ս, ի՞նչ ազդեցությունների ներքո, և ի՞նչ ճանապարհ է անցել հատկանվանագիտությունը (օնոմաստիկա)՝ մասնավորապես անձնանվանագիտությունը (անտրոպոնոմիկա) ընդհանրապես համաշխարհային ու ազգային դիտանկյունից: Այս հարցադրումներից էլնելով՝ տարբեր ժողովուրդներ ուսումնասիրություններ են կատարել ու կատարում իրենց անվանման համակարգի բնութագրման համար և հասել են նկատելի ձեռքբերումների: Բացառություն չենք նաև հայերու. հատկանվանաբանության ոլորտում հայագիտական ուսումնասիրությունները կարևոր դերակատարում ունեն ազգային ու համաշխարհային անվանաբանների պատմահամեմատական, զուգադրական քննություններ և եզրահանգումներ կատարելու առումով:

Հայ հատկանվանաբանության ուսումնասիրման լուրջ հաջողությունները նախնառաջ պայմանավորված են բառարանագրության ոլորտում կատարված հսկայական աշխատանքով, որի արդյունքում ընթերցողի սեղանին են դրվել բավական ներկայանալի բառարաններ¹: Թերևս տեղին է հիշել լեզվաբան Վ. Նիկոնովի

* Ներկայացվել է 11. VIII. 2020 թ., գրախոսվել է 28. X. 2020 թ., ընդունվել է տպագրության 03. XI. 2020 թ.:

¹ Դրանցից են Մխիթար Աբբայի «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 2, Վենետիկ, 1769), «Բառարան Սուրբ Գրոց հանդերձ պատկերօք, աշխարհացուցօք եւ տախտակօք» (Կ. Պոլիս, 1881), Ն. Ճիւսնեանի «Առձեռն բառարան յատուկ անուանց» (Կ. Պոլիս, 1879), Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան» (այսուհետ՝ ՀԱԲ) (հ. 1–5, Երևան, 1942–1962), Տ. Ավետիսյանի «Հայոց ազգանունների բառարան» (Երևան, 2004), Փ. Մելքիսիանյանի «Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան (ըստ V–XX դարերի հայ բանաստեղծության)» (Երևան, 2001) և էլի մի շարք փոքր ու մեծ բառարաններ:

զնահատականը: Նա Հր. Աճառյանի բառարանը համարում է «Կովկասի անձնանվանագիտության գլխավոր իրադարձությունը»²:

Հր. Աճառյանն իր բառարանի առաջաբանում գրում է. «Իմ այս աշխատությամբ ես մեր բանասերներին տալիս եմ մի պատրաստի Տեղեկատու, որ նրանց սեղանի անհրաժեշտ գիրքը պիտի լինի և նրանց ամենօրյա խորհրդատուն ... Աշխատությունս պիտի միջոց տա նաև կատարելու բազմաթիվ նորանոր ուսումնասիրություններ ... Վերջապես ամեն մի անուն կարող է նյութ հայթայթել մի ամբողջ մենագրություն կազմելու»³: Եվ, իսկապես, վերջին տասնամյակներում բազմաթիվ ուսումնասիրություններ՝ մենագրություններ, բառարաններ, հոդվածներ են գրվել՝ խարսխված մեծ լեզվաբանի բառարանային հսկայածավալ նյութի վրա:

Հանդիպում են նաև նեղ բնույթի որոշ աշխատանքներ, ինչպես՝ Կ. Դուրգարյանի «Անվանագիրք»-ը⁴, որում ուսումնասիրված են այժմ գործածվող ու տարածված անուններ. դրանց մի մասի ծագումն ու ստուգաբանությունը վերանայված են, հանգամանորեն բացատրված են նաև նոր ու նորագույն այն անձնանունները, որոնք չկան Հր. Աճառյանի բառարանում, Մեհրուժան Բաբաջանյանի «Անունդ ինչ է. աստվածաշնչյան անունների բառարան»-ում⁵, որտեղ բավական հետաքրքիր խորագրերի տակ (Անունդ թող չքի քեզ մահվանից հետո նույնպես, Անձնանունների խորհրդաբանությունը, Հեթանոսական անվանակոչումներ, Անձնանունների թվային արժեքը, Անունը՝ որպես մարդու կյանքի ուղեցույց, Անունների բույրը և այլն) ընթերցողին ներկայացվում է հետաքրքիր նյութ, Ռուբեն արեղա Չարգարյանի ու Շահեն արեղա Անանյանի «Ավետարանների գործող անձինք» գիրքը, որը, հեղինակների բնութագրմամբ, կարող էր նաև կոչվել «Նոր Կտակարանի անձնանունների բառարան»⁶: Հետաքրքիր աշխատանք կարելի է համարել Մանվել սարկավազ Մարգարյանի «Հայ հոգևորականների պատվանունների և մականունների բացատրական բառարան»-ը, որտեղ տրվում են բոլոր ժամանակների հայ հոգևորականների մականուններն ու պատվանունները: Ծածկանունների մեծ ծավալ է ներկայացնում Բախտիար Հովակիմյանի «Հայոց ծածկանունների բառարան»-ը⁷, որտեղ, չնայած կատարված հսկայական աշխատանքին, մականունների, պատվանունների ու

² В. Никонов. Состояние и задачи ономастических исследований Кавказа. — «Вопросы языкознания» (М.), 1975, № 4, с. 111.

³ Տե՛ս Հր. Աճառյան. ՀԱԲ, հ. Ա, Երևան, 1942 թ., էջ XV–XVI:

⁴ Կ. Դուրգարյան. Անվանագիրք, Երևան, 1981:

⁵ Մ. Բաբաջանյան. Անունդ ինչ է. աստվածաշնչյան անունների բառարան, Երևան, 2012:

⁶ Ռուբեն արեղա Չարգարյան, Շահեն արեղա Անանյան. Ավետարանների գործող անձինք, Մթ. Էջմիածին, 2010:

⁷ Բ. Հովակիմյան. Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005:

կեղծանունների տարանջատում չենք տեսնում: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև Ռ. Գևորգյանի «Հայոց ծածկանունների, կեղծանունների բառարան»-ը⁸:

Հայ ընթերցողը հիմնականում չի տարբերում մականունը կեղծանունից, և կամ արդյոք հավասարաթեք են կեղծանունն ու ծածկանունը, գրողի և արվեստագետի գրական անունը կարելի է արդյոք կեղծանուն կամ ծածկանուն համարել:

Կեղծանուն (ռուս.՝ псевдоним, լատ.՝ pseudonymos): Անհատի կողմից (հիմնականում՝ գրողներ, արվեստի գործիչներ) ընտրված կամայական անուն, որով տվյալ անձը ներկայանում է հանրությանը, ինչպես նաև՝ ծածկանուն, գրչանուն, գրական անուն⁹:

Ավելի հաճախական գործածություն ունի ծածկանուն տերմինը (օտար անվանումը նույնանում է կեղծանուն տերմինի օտար անվանումներին). այդ են վկայում հատկապես XX դ. հրատարակված բառարանների վերնագրերը՝ Խ. Բարսեղյանի¹⁰, Բ. Տավուշեցու¹¹, իսկ XXI դարասկզբին լույս տեսած Ռ. Գևորգյանի¹² բառարանները: Փորձենք ներկայացնել կեղծանուն և ծածկանուն տերմինների ընդհանրություններն ու տարբերությունները. հնարավոր է դրանք դիտարկել որպես առանձին տերմիններ և կամ, հակառակը, ընդամենը համանիշ կամ նույնանիշ:

Այս տերմինների բնութագրման առումով լեզվաբանական գրականության մեջ հակասություններ կան: Անդրադառնալով դրանց:

Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարան»-ում այս տերմիններն առանձին գլխաբառերով ներկայացված չեն, այլ միայն Հատուկ անուն գլխաբառի տակ, որտեղ հեղինակը գրում է. «Անձնանունների մեջ ուրույն շերտ են կազմում կեղծանունները՝ ծածկանունները, մականունները» և ապա հավելում է. «Կեղծանունը կամ ծածկանունը հնարված անձնանուն է (ընդգծումները մերն են՝ Փ. Մ.), որը այս կամ այն հանգամանքով պայմանավորված փոխարինում է անձի կամ բաղադրյալ անվանը»¹³: Ակնհայտ է, որ հեղինակի համար այս երեք տերմինները նույնական են, և դա երևում է նաև իր բերած օրինակներից, ինչպես՝ Նար-Դոս, Բաֆֆի, Պերճ Պոռչյան, Դանիել Վարուժան, Նաիրի Զարյան, Հովհաննես Շիրազ, Գամառ-Քաթիպա ու այլն:

Նաև չի կարելի համաձայնել այն կարծիքին, որ կեղծանունն անձնանուն է: Ինչ խոսք, կան կեղծանուններ, որոնք ինչ-որ անձանց անուն են եղել, ինչպես՝ Լեո՝ գրական հերոսի անձնանուն, Բայց դա չի նշանակում, որ Լեո-ն Առաքել Բաբախանյանի համար

⁸ Ռ. Գևորգյան. Հայոց ծածկանունների, կեղծանունների բառարան, Երևան, 2002:

⁹ Որպես տերմին դիտարկելիս այս խմբում պետք է առանձնացնել գրական անունը:

¹⁰ Տե՛ս Խ. Բարսեղյան. «Մշակի» ծածկանունների բառարան, Երևան, 1962:

¹¹ Տե՛ս Բ. Տավուշեցի. Նահատակ մտավորականների ծածկանուններ. – «Էջմիածին», 1965, Ժ, էջ 31–36, 1966, Բ, էջ 52–57:

¹² Տե՛ս Ռ. Գևորգյան. նշվ. աշխ.:

¹³ Տե՛ս Հ. Պետրոսյան. Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 61–62:

դառնում է երկրորդ անձնանուն, այլ ընդամենը՝ պայմանական անուն, որը կոչվում է կեղծանուն, և այն բնորոշ է ոչ միայն մեզ՝ հայերիս, այլև շատուշատ այլ ժողովուրդների:

Ըստ Էդ. Ադայանի բացատրական բառարանի՝ կեղծ և ծածուկ բառերը չունեն իմաստային ընդհանրություններ. ծածուկ-ն ունի թաքուն, գաղտնի, քողարկված, չհայտնաբերված, իսկ կեղծ-ը՝ խաբեություն պարունակող, ճշմարտությունը խեղաթուրող, ոչ իսկական և մի քանի այլ իմաստներ: Ինչպես տեսնում ենք, համեմատության ոչ մի եզր: Որքանո՞ւմ են այս իմաստները պահպանվում այս բառերով բաղադրված ծածկանուն և կեղծանուն տերմիններում: Նորից դիմենք բառարանի օգնությանը. «Կեղծանուն, գ. Կամայական անուն (ուշադրություն դարձրեք՝ անուն, ոչ թե անձնանուն – Փ. Մ.), որով հանդես է գալիս գրողը՝ գործիչը՝ արվեստագետը են»¹⁴: «Ծածկանուն, գ. մականուն, որով հաճախ հանդես են գալիս գրողները՝ հրապարակախոսները են»¹⁵: Այս դեպքում արդեն, կարծում ենք, որ ամեն ինչ ավելի խճճվեց: Այսինքն՝ ըստ հեղինակի, եթե կեղծանունը կամայական անուն է, ապա ծածկանունը մականուն է: Ոչ միայն բառարանագրի, այլև շատերի մոտ թուրքմբոնում կա կեղծանվան՝ որպես տերմինի մասին, և որ շատ շատերի համար մականունն ու կեղծանունը միևնույն երևույթն են արտահայտում:

Կարծում ենք՝ հստակ տարանջատելի է կեղծանունը մականունից. դրանք տարբեր տերմիններ են և տարբեր իրողություններ են անվանում, այնպես որ հեղինակների մոտեցումը՝ տվյալ դեպքում կեղծանունը մականուն համարելու, չի համապատասխանում դրանց էությանը:

Մինչդեռ կեղծանունն ու ծածկանունը, անկախ դրանց բաղադրիչ արմատների՝ կեղծ, ծածուկ, տարբերություններից, ունեն շփման եզրեր և, ինչպես կտեսնենք ստորև բերվող օրինակներից, այս տերմինները կարող են փոխարինել մեկը մյուսին:

Կեղծանվան առաջացման հիմնական պատճառը երկար կամ անբարեհունչ անվան փոխարեն կարճ ու բարեհունչ անուն ունենալու և հանրության շրջանում այդ անվամբ հայտնի դառնալու ցանկությունն է:

Կեղծանունը կարող է կամ նոր բառ լինել՝ տվյալ անձի ընտրությամբ, կամ իր անվանման ամբողջ բաղադրիչներից ստացված նոր տարբերակ, կամ անուն-ազգանվան սկզբնատառերով և այլն:

Կեղծանունը հիմնականում միաբաղադրիչ անվանում է, բայց հանդիպում են նաև երկրաբաղադրիչ կեղծանուններ, ինչպես՝ Պերճ Պոռճյան (Հովհաննես Առաքելյան), Վոլտեր (Ֆրանսուա-Մարի Արուե), Մաքսիմ Գորկի (Ալեքսեյ Պեշկով), Մերիլին Մոնրո (Նորմա Բեյքեր), Շեր (Շերիլին Սարգսյան), Լեո Կամսար (Արամ Թովմադյան)¹⁶:

¹⁴ Տե՛ս Է. Ադայան. Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Երևան, 2014, էջ 636:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 571:

¹⁶ Լեո Կամսարը հայտնի է նաև Կարապետ Կայեն և Արա Մապյան կեղծանուններով:

Ու քանի որ այս դաշտում ամենաներկայանալին Բ. Հովակիմյանի բառարանն է, ուստի խոսենք ծածկանուն տերմինի մասին՝ համեմատության եզր ընդունելով տվյալ բառարանում ներառված կեղծանունների օրինակները: Բառարանը բավական տարողունակ է. ութ հազար հեղինակի քսանհինգ հազար ծածկանուն է ներկայացվում այստեղ, ընդգրկում է ժամանակային հսկայական սահման՝ XVI դարից մինչև իր ապրած օրերը (XXI դարասկիզբ), ավելի քան 1600 պարբերականի նյութ՝ տպագրված աշխարհի տարբեր անկյուններում, ուստի այն՝ իբրև կեղծանունների վերաբերյալ համապարփակ փաստական աղբյուր լինելու առումով, անշուշտ, ունի բավական մեծ կարևորություն: Բայց կեղծանունների հավաքման ու բացատրման առումով այս բառարանը հեռու է բավարար լինելուց: Ոչ ոք չի կարողանա պարզել, թե ինչպես է ստեղծվել տվյալ ծածկանունը, ում կողմից, ինչ հանգամանքներում և այլն, քանի որ բառարանում ընդամենը տրված են ծածկանունները, և թե որտեղ ու երբ են դրանք կիրառվել, այսինքն՝ աղբյուրը:

Ներածության մեջ հեղինակը ծածկանունների դերի մասին հայտնում է հետևյալը. «Ծածկանունների գործածության հիմնական նպատակը եղել է իրականությունից ծածկել, թաքցնել իսկական անձնավորության ով լինելը»¹⁷ ու նշում դրա պատճառները՝ հասարակական-քաղաքական, անձնական և այլն: Տեսականորեն այս բնութագիրը ճիշտ է, բայց գործնականում չի համապատասխանում իր իսկ բառարանում բերված բազում ծածկանուն օրինակներին, քանի որ դրանք իրականում մականուններ են կամ գրական անուններ, որոնց համար կարելի է ուրիշ, ավելի հաջող տերմին գտնել, բայց ոչ ծածկանուն կամ կեղծանուն: Բերենք օրինակներ. որ Ալազան, Սարմեն, Ատրպետ, Համաստեղ, Մուրացան, Բաֆֆի, Շիրվանզադե, Սայաթ-Նովա, Լեռ, Ֆանթալիո (Արշակ Չոպանյան) անունները կեղծանուններ են, դա ոչ ոք չի կարող վիճարկել, բայց եթե ասում ենք Եղիշե Չարենց, Հովհաննես Շիրազ, Վահան Տերյան, Ակսել Բակունց, Համո Սահյան, Նաիրի Չարյան, Շառլ Ազնավուր և այլն, ապա որոշ են այստեղ կեղծանունները կամ ինչպե՞ս կարող են այս ձևերը համարժեք լինել վերը բերված կեղծանուններին: Ո՞վ չգիտի, որ Եղիշե Չարենցը Եղիշե Սողոմոնյանն է, որն իրեն մականուն է ընտրել Չարենց ձևը, և որի մեկնաբանման մասին կան մի քանի տեսակետներ¹⁸: Խոսքն այս դեպքում այն մասին չէ, թե որն է տվյալ մականվան բացատրության հնարավորինս ճիշտ տարբերակը¹⁹, այլ այն՝ ստորև բերված

¹⁷ Տե՛ս Բ. Հովակիմյան. նշվ. աշխ., էջ 5:

¹⁸ Հետագայում Չարենցն այս մականունը իր համար դարձրեց պաշտոնական ազգանուն. նրա դուստրերը հենց այդ ազգանունով էլ ներկայանում են՝ Արփենիկ Չարենց և Անահիտ Չարենց:

¹⁹ Կարծում ենք՝ ուսանողների՝ իրեն ուղղված հարցի պատասխանը, այն, որ ստեղծագործ մարդը, մտնելով աշխարհ, կոչված է աշխարհը փոխելու, աշխարհին նայում է նոր հայացքով, և նրանք մերժվում են հանրության կողմից, չար են կոչվում: Մանրամասն տե՛ս Հետահայաց. – armenpress.am

օրինակներից և ոչ մեկը չի կարող կեղծանուն համարվել: Այդ անվանումներում ընդգծված բաղադրիչներն մականուն են՝ Չարենց, Շիրազ, կամ անուն-ազգանվան ավելի բարեհունչ տարբերակներ, ինչպես՝ Վահան Տերյան, Նաիրի Չարյան, կամ միայն ազգանվանակերտ հիմքը՝ ինչպես՝ Ազնավուր, Զոհրապ առանց-յան-ի, ինչպես՝²⁰ կարող են կեղծանուն համարվել:

Խոսենք մականվան և կեղծանվան մի քանի տարբերակիչ հատկանիշների մասին:

Մականունը տվյալ անձը կարող է ունենալ իր իսկ ապրած ժամանակահատվածում՝ Տիգրան Մեծ, Գարեգին Նժդեհ, Հովհաննես Շիրազ, Եղիշե Չարենց, ինչպես նաև՝ իր մահից հետո, ասենք թագավորների կամ կայսրությանների կարգահամարները՝ Արտավազդ Բ, Վազգեն Առաջին, Գարեգին Երկրորդ: Ընդգծվածներից և ոչ մեկը չի կարող իբրև կեղծանուն ներկայացվել, որովհետև կան մի քանի գործոններ, որոնցով սրանք տարանջատվում են:

Մինչդեռ անհատը գիտակցաբար ինքն է իրեն կեղծանուն ընտրում, և ընտրում իր ճաշակով, ասենք՝ Դաֆֆի, Շիրվանզադե կամ Մայաթ-Նովա, թեև բացառված չէ ուրիշի խորհրդով կեղծանուն վերցնելը: Կեղծանունը անուն-ազգանվան հետ կապ ունի միայն սկզբնատառերի՝ իբրև կեղծանուն հանդես գալու դեպքում, ինչպես՝ Ա. Բ. > Առաքել Բաբախանյան: Բայց ոչ մի կապ չունի Լեո-ն իր անուն-ազգանվան հետ:

Կարծում ենք՝ ճիշտ չէ կեղծանունն անվան հետ միասին գրելը կամ արտաբերելը, ինչպես՝ Ալեքսանդր Շիրվանզադե²⁰: Եթե անվանման կադաստրում անունն առկա է, ուրեմն այն չի կարող կեղծանուն դիտարկվել: Ուրեմն սխալ է Ալեքսանդր Շիրվանզադե ասելը. պետք է լինի կամ Շիրվանզադե, առանց Ալեքսանդրի, կամ Ալեքսանդր Մովսիսյան: Դա նույնն է, որ սկսենք ասել Միքայել Նար-Դոս կամ Հարություն Մայաթ-Նովա: Ցավոք, համացանցը հեղեղված է այս կարգի սխալագրություններով, անգամ՝ դասագրքերում, իսկ բառարաններում՝ առավել մեծ չափերով, ճիշտ տարանջատում կատարված չէ: Դարձյալ հղում կատարենք Բ. Հովակիմյանի բառարանին, որտեղ տրված են անուն-ազգանվան սկզբնատառերը՝ իբրև կեղծանվան մի դրսևորում, ասենք՝ Ա. Մ., որն իր իսկ կողմից բացված է Ալեքսանդր Շիրվանզադե²¹: Միանշանակ սխալ է. այն պետք է բացել Ալեքսանդր Մովսիսյան: Թե չէ՝ ուր մնաց կեղծանվան արժեքը: Եթե Շիրվանզադե, ապա միայն առանձին գրությամբ, այլապես խախտվում են կեղծանվան բոլոր տեսական բնութագրիչները: Ի դեպ, նշենք, որ գրողի բոլոր գործերը 1880–1930-ական թվականներին տպագրվել են միայն Շիրվանզադե կեղծանվամբ, հանդեսներում և ամսագրերում հանդիպում է նաև Շիրվանզադե կեղծանվան միայն

²⁰ Ցավոք, այդպես է տրված Շիրվանզադեի երկերի հինգհատորյա ժողովածուն (Ալ. Շիրվանզադե. Երկեր հինգ հատորով, Երևան, 1986–1988): Մինչդեռ 50–60-ական թվականների հրատարակչություններում և անգամ դրանցից շատ առաջ տրվում է միայն Շիրվանզադե. տե՛ս նույնի՝ Արտիստը, Երևան, 1959, նույնի՝ Ո՞րն է մայրը, Երևան, 1963:

²¹ Տե՛ս Բ. Հովակիմյան. նշվ. աշխ., էջ 28:

առաջին տառով՝ Շ., հրապարակումներ: Կեղծանվան դերն այն է, որ նա հենց թաքուն պահի բուն հեղինակին, այստեղից էլ գալիս է կեղծանուն կամ ծածկանուն տերմինը: Ժամանակին այդպես ստեղծվեց Գամառ-Քաթիպան: Իսկ եթե անվան հետ ենք արտաբերում կամ գրում կեղծանունը, ուրեմն այն պետք է դիտարկվի իբրև մականուն, ինչը թյուրբանությունների տեղիք կտա: Ինչո՞ւ ենք ասում Աշոտ Երկաթ, որովհետև բոլորին է հայտնի՝ պատերազմում անպայման հաղթանակի հասնելու նրա երկաթյա կամքը, նա իրավացիորեն վաստակել է այդ պատվանունը, ինչո՞ւ ենք ասում Եղիշե Չարենց, որովհետև յուրաքանչյուրս գիտի այն տեսակետները, ըստ որոնց՝ Եղիշե Սողոմոնյանը դարձել է նաև Եղիշե Չարենց, ասել է թե՛ նա ունի անվանման երկու բանաձև՝ անուն-ազգանուն և անուն-մականուն, բայց չունի կեղծանուն, նույնը Հովհաննես Շիրազի դեպքում, Դանիել Վարուժանի: Ասենք ավելին. կան դեպքեր, երբ միայն մականվամբ հնարավոր չէ որոշել տվյալ անհատին, ինչպես իմաստունի դեպքում: Առանց անվան, ոչ ոք չի կարող տարբերակել Սողոմոն Բնաստունին Խիկար Բնաստունից, կամ միայն երկաթ ասելով ոչ ոք Աշոտ Երկաթ չի ընկալի:

Գրական կեղծանունները գուցե և հետաքրքրական են, այնուամենայնիվ, տաղանդի հետ որևէ առնչություն չունեն, ինչպես՝ Շիրվանզադե> Շիրվանի որդի: Կեղծանվան ամենատարածված տեսակը միաբաղադրիչ կեղծանուններն են, ինչպես՝ Օերենց, և այդ բառը որևէ կապ չունի նրա անուն-ազգանվան հետ: Հակոբ Մելիք-Հակոբյանի երկերի տասնհատորյակը տպագրված է միայն Բաֆֆի կեղծանվամբ, Առաքել Բաբախանյանի երկերը՝ Լեո կեղծանվամբ, և այդ նույն ձևով՝ Մուրացյան, Նար-Դոս, Սայաթ-Նովա, որը, կարծում ենք, արտահայտման միանգամայն ճիշտ ձևն է:

Եթե գրողն իր անուն-ազգանունը ենթարկել է որոշակի փոփոխության՝ այն ավելի գրական ու բարեհունչ դարձնելու համար, դա չի նշանակում, որ նա ստեղծել է իր համար կեղծանուն, ինչպես՝ Վահան Տերյանը կամ Համո Սահյանը: Այս դեպքում ունենք տվյալ գրողի գրական անունը, որը չի կարելի նույնացնել նրա անուն-ազգանվանը, առավել ևս համարել կեղծանուն կամ մականուն:

Կեղծանուն չէ և ոչ էլ մականուն, երբ գրողն իր ազգանվան յանը հանում է, ինչպես Ղևոնդ Ալիշան/Ալիշանյան, Շառլ Ազնավուր/Ազնավուրյան: Այս դեպքերում ուղղակի ունենք գրական անուն՝ գրական բառի՝ գրականության մեջ գործածվող նշանակությամբ, երբ հեղինակն իր անուն-ազգանունն որոշակի փոփոխություններով դարձնում է ավելի գրական: Բայց ահա այս օրինակներում՝ Ազատ Վշտունի> Կարապետ Մամիկոնյան, Լեո Կամսար> Արամ Թովմաղյան, Պերճ Պողոսյան> Հովհաննես Տեր-Առաքելյան հստակ ունենք երկբաղադրիչ կեղծանուններ:

Կեղծանուններն ունեն ստեղծման անհատական դրսևորում և համակարգվում են որոշակի խմբերում: Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

1. Անուն-ազգանվան, միայն անվան կամ միայն ազգանվան, մականվան, նույնիսկ կեղծանվան սկզբնատառը կամ տառերը, ինչպես՝ Դ.> Խաչիկ Դաշտենց, Դ.> Դերենիկ

Դեմիրճյան, Շ. > Շահե արք. Աճեմյան, Ա. Ի. > Արամ Բնճիկյան, Ա. Չ. > Արշակ Չոպանյան, Յ. Յ. > Հակոբ Հակոբյան *և այլն*²²: Հանդիպում են կեղծանուններ նաև այլ դասավորությամբ, ինչպես՝ Պերճ Պոռշանց > Ճ. Յ., այսինքն՝ վերջին տառերով, կամ էլ բնավ պարտադիր չէ, որ այդ տառը կամ տառերը կապ ունենան կամ մասամբ կապ ունենան նրա իրական անուն-ազգանվան հետ, ինչպես՝ Ա. Ա. > Մանուկ Աբեղյան, Ա. Ա. > Քերովբե Զրաքյան *և այլն*:

2. Կեղծանվան ստեղծման մյուս տարբերակն անվան *և* ազգանվան կրճատումից ստացված կեղծանունն է, ինչպես՝ Գառզու > Գառնիկ Զուլումյան, Սարմեն > Արմենակ Սարգսյան: Այս տարբերակը կապ չունի վերևում ասված *և* բերված օրինակների հետ: Բնչո՞ւ այն պարզ պատճառով, որ ընթերցողը կարող է չիմանալ տվյալ անձի իսկական անուն-ազգանունը, *և* հեղինակի անուն-ազգանվան ներկայացման տվյալ ձևը նրա համար միանշանակ ընկալելի է դառնում որպես կեղծանուն: Բայց բառարանում իբրև կեղծանուն են ներկայացվում նաև անուն-ազգանվան մի բաղադրիչը՝ կամ ամբողջական անուն, կամ վանկ տարբերակով, ինչպես՝ Գինո > Շաղգամյան Գինո, Գմբեթ > Գմբեթյան Արտաշես, Դան > Դանիելյան Մերոբ *և այլն*:

3. Տվյալ անհատը վերցնում է իրեն դուր եկած ինչ-որ մի բառ՝ ծաղկի, դաշտի անուն, տվյալ բառի նշանակությունը *և* այլն, ինչպես՝ Դարդունի > Տեր-Հարությունյան Գարեգին, Դև > Դարբինյան Մաթևոս, Լինչ > Կարինյան Արտաշես, Խան > Աֆթանդիլյան Միսաք, Սիլվա > Աբգար Պայազատ, Ծերենց > Հովսեփ Շիշմանյան, Ինտրա > Տիրան Զրաքյան, Սիպիլ > Զապել Ասատուրի Խանճյան, Մուրացան > Գրիգոր Տեր-Հովհաննիսյան, Հավասի > Արմենակ Մարկոսյան *և այլն*:

Բերենք մի քանի հայտնի անձանց կեղծանունների օրինակներ.

* Ալազան > Վահրամ Մարտիրոսի Գաբուզյան: Հայ սովետական գրող, հասարակական-քաղաքական գործիչ, որը սկզբնական շրջանում տպագրվել է Հորձանք *և* Վահրամ գրական անուններով, այնուհետև հիշելով Գևորգ Բաշինջաղյանի հոդվածը՝ «Ալազանի դաշտավայրում», հավանում է Ալազան անունն ու վերցնում՝ իբրև գրական կեղծանուն:

* Նար-Դոս > Հովհաննիսյան Միքայել Ղազարի: «Նոր դար» թերթի քարտուղար Մելքոն Դանագյոզյանը դիմում է Միքայել Հովհաննիսյանին, որ նրա համար մի լավ կեղծանուն գտնեն: Բառարանները երկար նայելուց հետո կանգ են առնում Նարդոս ծաղկանվան վրա, *և* «Նունե» վիպակը լույս է տեսնում Նար-Դոս կեղծանուն ստորագրությամբ:

* Լեո > Առաքել Բաբախանյան: Մեծ պատմաբանը Ֆրիդրիխ Շպիլհագենի հայտնի վեպի՝ «Մեկը զինվոր չէ դաշտում» հերոս Լեոյի անունը դարձրել է իր կեղծանունը:

²² Այս ձևերը մեզ համար կեղծանուն են՝ վերապահությամբ:

* Սայաթ-Նովա (*Մէյաթ-Նէվա*)>Հարություն (*Արուսին*) Սայաթյան: Կեղծանունը տարբեր կերպ է մեկնաբանվել. պարսկերենից թարգմանված՝ երգի, ձայնի որսորդ, սիրահար կամ պարզապես՝ երգի որսորդ (*սայաթ*՝ որսորդ, *նովա*՝երգ), մեկ այլ վարկածի համաձայն՝ Սայաթի թոռ, հավանաբար, պապի անունից:

* Բաֆֆի> Հակոբ Մելիք-Հակոբյան²³: Հայ նշանավոր վիպասան Հակոբ Մելիք-Հակոբյանի կեղծանունը, որն այժմ գործածական է իբրև անձնանուն: «Մշակ» թերթի երրորդ համարից արդեն Հակոբ Մելիք-Հակոբյանը ընթերցողին ներկայանում է Բաֆֆի կեղծանվամբ: Բաֆֆի բառի ծագման շուրջ բացված բանավեճին մասնակցել է նաև հայտնի իրանագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռ. Աբրահամյանը, որը գտնում էր՝ սա արաբական *Rafi* անունից է, որ նշանակում է վսեմ, բարձր, բարձրագույն, և որ հենց այդ նշանակությամբ շոյել է վիպասանին իր գրավիչ իմաստությամբ:

Գրական այս կեղծանունը վերցնելու ևս մի քանի տարբերակներ են շրջանառվում.

– ըստ Լեոյի՝ Բաֆֆի-ն վերցվել է արաբերենից, և որ 60-ական թվականներին Թիֆլիսի իտալական օպերայի դերասանուհիներից մեկի ազգանունն էր Բաֆֆի:

– Բաֆֆու կենսագիրներից մեկի կարծիքով՝ սա արաբերենից պարսկերենին անցած բառ է և մեկն է այն տիտղոսներից, որ տրվում էին պարսից բարձրաստիճան անձանց պետությամբ՝ մատուցած ծառայությունների համար:

– Մեկ այլ բանասերի կարծիքով՝ սա ասորական բառ է, նշանակում է բաբբի, այսինքն՝ վարդապետ: Վիպասանի եղբոր որդին՝ Սողոմոն Տեր-Հակոբյանն այս տարբերակն է համարում հավանական՝ նկատի ունենալով, որ Բաֆֆին կոչված էր հայ կյանքի մեջ նոր գաղափարների վարդապետը կամ քարոզիչը լինելու:

– Կա նաև մի ժողովրդական ավանդություն, ըստ որի՝ Բաֆֆին Պարսկաստանում ճանապարհորդելիս տեսնում է մի բարձր լեռ և բացականչում է. «Որքա՛ն բարձր սար է»։ Ուղեկիցները նրան պատասխանում են՝ այո, բարձր սար է, և այդ պատճառով էլ կոչվում է Բաֆֆի: Անունը դուր է գալիս վիպասանին, և նա այն դարձնում է իրեն կեղծանուն²⁴:

4. Անհատը դիմում է զանազան հնարքների և ստանում ինքնատիպ տարբերակ, ինչպես՝ Նոր-Այր>Հարությունյան Նորայր, Սե-Դա> Խանդյան Սարգիս, Մեդ-Սուր> Սուրբաբյան Մեդրակ և այլն: Բերենք մեկ-երկու հայտնի մարդկանց այդ կարգի կեղծանվան օրինակներ.

* Համաստեդ> Կելենյան Համբարձում Հովհաննեսի: Վերցրել է իր և երկու եղբայրների անունների առաջին վանկերը՝ Համ-Աստ(վածատուր)-Եդ(իա):

²³ Ի դեպ, բացի Բաֆֆի կեղծանունից, Հակոբ Մելիք-Հակոբյանը հանդես է եկել նաև Փավստոս կեղծանվամբ:

²⁴ Տե՛ս Ե. Պ ե տ ր ո ս յ ա ն. Բաֆֆի, Երևան, 1959, էջ 117–118:

*Ջիվանի> *Բենկոյենց Սերովբե Ստեփանեի: Գարեգին Լևոնյանը գրում է, որ Սերովբեի հայրը դեռ կենդանի ժամանակ որդուն Ջիվանիկ է կանչել, և այդպես մինչ օրս նրան անվանում են Ջիվանի՝ կրճատելով վերջին կ-ն:*

5. Մեր մատենագրության մեջ գործածված բազում անուններ կեղծանուններ ենք համարում, քանի որ չգիտենք տվյալ անձի իսկական անուն-ազգանունը կամ թեկուզ միայն անունը, ինչպես՝

Ֆրիկ > անվան նշանակությունն է՝ Կրակի վրա խանձված դեռահաս ցորեն:

Եվ մի կարևոր նկատառում ևս: Ի վերջո, կեղծանունը միայն տեսականորեն է մնում իբրև կեղծանուն, որովհետև հանրությունը ժամանակի ընթացքում (երբեմն շատ արագ) բացահայտում է կեղծանվամբ հանդես եկողի իրական անունը, և նրան արդեն ընդունում է և՛ անվամբ, և՛ կեղծանվամբ:

XVI դարից սկսած՝ XIX դարում շատ մեծ կիրառություն ունեցող կեղծանուն-ը մեր օրերում գրեթե բացակայում է՝ հիմնականում տեղի տալով անուն-մականուն կադապարին:

Եզրակացություն

Այսպիսով՝ անձնականագիտության տերմինային համակարգում որոշակի դերակատարում ունեն կեղծանուն, մականուն, ծածկանուն, գրական անուն տերմինները, և եթե կեղծանունն ու ծածկանունը նույնանում են և կարող են հանդես գալ մեկը մյուսի փոխարեն, ապա այդպես չէ կեղծանուն և մականուն տերմինների դեպքում: Պրանք արդեն տարբեր դրսևորումներ ու բնութագրեր ունեն: Լայն առումով՝ սրանք բոլորը միգուցե և կարելի է գրական անուններ համարել, երբ խոսքը գնում է գրողի, բանաստեղծի մասին, բայց անպայման պետք է նկատի ունենալ, որ նեղ առումով գրական անունը գրողի կողմից որոշակի փոփոխման ենթարկված իր անուն-ազգանունն է:

Փառանձեմ Մեյթիխանյան – բ. գ. դ., ԵՂՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Աստվածաշնչի հատկանվանաբանություն, ժամանակակից հայոց լեզվի ուղղագրություն, հայոց լեզվի դասավանդումը դպրոցներում: Հեղինակ է 2 մենագրության, 3 դպրոցական դասագրքի, 3 բառարանի և 50 հոդվածի: parandzem9524@gmail.com

REFERENCES

- Aghayan Ed. Ardi hayereni ardzeri bacatrakan bararan, Yerevan, 2014 (In Armenian).
 Ajaryan Hr. Hayots andznanunneri bararan, h. 1–5, Yerevan, 1942–1962 (In Armenian).
 Avetisyan T. Hayots azganunneri bararan, Yerevan, 2004 (In Armenian).
 Babajanyan M. Anund inch e. astvadsashnchyan anunneri bararan, Yerevan, 2012 (In Armenian).
 Bararan Surb Grots handertz patkerok, ashkharhatsutsok ev takhtakok, K. Polis, 1881 (In Armenian).
 Barseghyan Kh. “Mshaki” dsadskanunneri bararan, Yerevan, 1962 (In Armenian).

- Gevorgyan R. Hayots dsadskanunneri, keghdsanunneri bararan, Yerevan, 2002 (In Armenian).
 Durgaryan K. Anvanagirk, Yerevan, 1981 (In Armenian).
 Hovakimyan B. Hayots dsadskanunneri bararan, Yerevan, 2005 (In Armenian).
 Jivanyan N. Ardzern bararan yatuk anuants, K. Polis, 1879 (In Armenian).
 Meytikhanyan P. Astvadsashnchi ev hayots surb anvants bararan (est V–XX dareri hay banasteghdzutyany), Yerevan, 2001 (In Armenian).
 Mkhitar Abba. Bargirk haykazean lezui, h. 2, Venetik, 1769 (In Armenian).
 Shirvanzade Al. Erker hing hatorov, Yerevan, 1986–1988 (In Armenian).
 Shirvanzade Al. Artiste, Yerevan, 1959 (In Armenian).
 Shirvanzade Al. Vorn e mayre?, Yerevan, 1963 (In Armenian).
 Petrosyan H. Hayerenagitakan bararan, Yerevan, 1987 (In Armenian).
 Petrosyan E. Raffi, Yerevan, 1959 (In Armenian).
 Ruben abegha Zargaryan, Shahen abegha Ananyan. Avetaranneri gordsogh andzink, Sb. Edjmiadzin, 2010 (In Armenian).
 Tavushetsi B. Nahatak mtavorakanneri dsadskanunner. – “Edjmiadzin”, 1965, Zh, 1966, B (In Armenian).
 Nikonov V. Sostoyanie i zadachi onomasticheskikh issledovaniy Kavkaza. – “Voprosy yazykoznania” (M.), 1975, № 4 (In Russian).

ВОКРУГ ТЕРМИНОВ ПСЕВДОНИМ, ПРОЗВИЩЕ

ПАРАНДЗЕМ МЕЙТИХАНЫАН

Резюме

Ключевые слова: ономастика, антропонимика, личное имя, псевдоним, прозвище, Гр. Ачарян, Б. Овакимян, Эд. Агаян, Г. Петросян, словарь, лексикография, имя-прозвище, имя-псевдоним, литературное имя.

Изучение системы личных имен (имя, фамилия, отчество, родовое имя, псевдоним, прозвище) является одним из важных и ключевых вопросов современной лингвистики.

Армянский читатель в основном не различает псевдоним и прозвище, и в разных языках один и тот же псевдоним выражается на армянском языке разными эквивалентными терминами. Кроме того, можно ли литературное имя писателя или художника считать псевдонимом? В описании этих терминов существуют противоречия даже в лингвистической литературе (Эд. Агаян, Г. Петросян).

Сравнение многочисленных примеров псевдонимов, прозвищ, литературных имен, включенных в словарь Б. Овакимяна, позволяет выявить причины возникновения псевдонимов и их отличие от прозвищ. Псевдонимы имеют индивидуальные истории возникновения и координируются в конкретных группах – имя-фамилия, псевдонимы, образованные от сокращения имени и фамилии, любое слово, которое понравилось человеку и т. д. Когда же писатель меняет свое имя, чтобы сделать его более литературным и благозвучным, то это не псевдоним, а литературное имя, как *Ваан Терьян* или *Амо Сагиян*.

Парандзем Мейтиханян – д. филол. н., доцент кафедры армянского языка филологического факультета ЕГУ. Научные интересы: библейская ономастика, орфография современного

армянского языка, преподавание армянского языка в школах. Автор 2 монографий, 3 школьных учебников, 3 словарей и 50 статей. parandzem9524@gmail.com

ON THE TERMS OF PSEUDONYM, NICKNAME

PARANDZEM MEYTIKHANYAN

Summary

Key words: Onomastics, anthroponymy, proper name, nickname, pseudonym, Hr. Acharyan, B. Hovakimyan, Ed. Aghayan, G. Petrosyan, dictionary, lexicography, name-nickname, name-pseudonym, literary name.

The examination of the system of personal names (name, surname, patronymic, nickname, pseudonym) is one of the key issues in modern linguistics.

The Armenian reader basically does not distinguish between a nickname and a pseudonym, and in foreign languages, the equivalent of pseudonym is expressed in Armenian in different terms that are identical. And rather, are the pseudonym and the nickname equal? Is the literary name of a writer or an artist a pseudonym? This research is dedicated to these issues. There are contradictions in the description of these terms even in the linguistic literature (Ed. Aghayan, H. Petrosyan), which we have referred to in our work.

And since the most presentable in this field is B. Hovakimyan's dictionary, so we examine the terms pseudonym, nickname, literary name, using the examples included in that dictionary. The work discusses in detail the causes of pseudonyms, examines their differences from nicknames, basing on numerous examples. Pseudonyms have an individual history of appearance and are coordinated into specific groups – name and surname, pseudonyms, derived from the reduction of the name and surname, any word that the person liked, etc. When a writer changes his name to make it more literary and eloquent, then it is not a pseudonym but *literary names*, such as *Vahan Teryan* or *Hamo Sahyan*.

Parandzem Meytikhanyan – Doctor of Sciences in Philology, Associate Professor of the Chair of Armenian Language at the YSU Faculty of Philology. Scientific interests: Biblical definition, orthography of the modern Armenian language, teaching the Armenian language in schools. Author of 2 monographs, 3 textbooks, 3 dictionaries and 50 articles. parandzem9524@gmail.com